Արձանագրություն 3
/Протокол 3/

Վանաձոր համայնքի ավտոբուսների ձեռքբերում« ՀՀ ԼՄՎՀ ԷԱՃԱՊՁԲ-26/55» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի պարզաբանում տրամադրելու մասին նիստի
Заседания оценочной комиссии о предоставлении разъяснений закупоки под кодом " HH LMVH EACHAPDzB-26/55"для Предметом закупки является приобретение 45 автобусов для нужд общины Ванадзор

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «27» մայիսի 2026թ. ժամը 11:00-ին:
заседания Оценочной комиссии состоялось «27» мая 2026г. в 11:00.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ
Տ.Մելքոնյան*
Անդամներ
Խ.Մայիսյան, Է. Հակոբյան,
Գնումները համակարգող
Ն. Հովակիմյան
Принимали участие
Председатель комиссии: Т. Мелконян
Члены комиссии: Х.Маисян, Э. Акопян,
Координатор по закупкам Н. Овакимян

1. Պարզաբանում
1.Разъяснение

1.1 https://eauction.armeps.am/ համակարգի միջոցով 26"05"2026թ" ստացվել է պարզաբանում հետևյալ բովանդակությամբ՝

Պարզաբանում 1

Հնարավո՞ր է արդյոք կատարել հետևյալ խմբագրումները տեխնիկական բնութագրում: Շարժակազմի չափորոշիչ՝ ...Ավտոբուսները պետք է լինեն 2026 թվականից ոչ հին արտադրության, չշահագործված, վազքը ձեռքբերման պահին՝ ներգործարանային և փորձարկման համար թույլատրելի սահմաններում, ինքնատեղափոխման դեպքում՝ վազքը ոչ ավելի, քան արտադրող երկրից ներկրման օպտիմալ երթուղով հաշվարկված միջին հեռավորության կամ ներկայացված փաստաթղթերով հիմնավորված վազքին համապատասխան: Փոխանցման տուփը՝ մեխանիկական կամ ավտոմատ, Allsion կամ համարժեք ZF, ինտեգրված ռետարդեր: Կառուցվածքային և տեխնիկական այլ չափորոշիչներ՝ ցածր մուտքի հարմարադասում, եզրաչափային չափերը՝ երկարությունը 7000 մմ - 8700 մմ, լայնությունը՝ ոչ ավելի 2600 մմ-ից, ավտոբուսի բարձրությունը՝ առավելագույնը 3600 մմ, ուղևորասրահի բարձրությունը՝ ոչ պակաս 1950 մմ-ից, ավտոբուսի լցավորված և նախատեսված պարագաներով կահավորված զանգվածը ոչ ավելի 9900 կգ-ից, թույլատրելի առավելագույն զանգվածը (առավելագույն բեռնվածությունը)՝ 14150կգ-ից:

Պարզաբանում 2

Հարգելի Գործընկերներ, շնորհակալություն արագ արձագանքի համար: Հարց 1. Նախորդ հարցման 2-րդ հարցի պարզաբանման մասով հատնում եմ հետևյալի մասին՝ Հարցման 2-րդ հարցի պատասխանում նշված է, որ "Վաճառողը ոչ միայն կարող է, այլև պարտավոր է ՊԵԿ համակարգով դուրս գրել սովորական հարկային հաշիվ՝ ՀՀ դրամով և ներառյալ ԱԱՀ-ն": Հաշվի առնելով, որ մաքսազերցումը արվելու է Գնորդի կողմից առաջարկում ենք ՊԵԿ էլեկտրոնային համակարգով դուրս գրել ոչ թե հարկային հաշիվ ապրանքագիր ներառյալ ԱԱՀ–ն, այլ ապրանքների մատակարարման հիմք հանդիսացող մեկ այլ հաշիվ վավերագիր, որում ներառված կլինեն ապրանքի նկարագիրը, քանակը, գինը և գումարը առանց ԱԱՀ, ինչը հարկային օրենսգրքի իմաստով ապրանքի մատակարարման ամբողջական հաշվարկային փաստաթուղթ է: Տվյալ դեպքում, քանի որ ապրանքը մատակարարվելու է DAP (Incoterms 2020) շրջանակներում հիմնավոր կիրառելի է այս փաստաթղթի դուրս գրումը: Խնդրում եմ Ձեր դիրքորոշումը այս առումով: Հարց 2 Պայմանագրի տեքստում նշված է վճարման հետևյալ պայմանը՝ 3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: Սակայն պայմանագրի հավելված 3-ում նշված է որ վճարումները կատարվելու են հունիս ամսից մինչև դեկտեմբեր ամիս: Խնդրում եմ մեկնաբանել ինչ ընթացակարգով և ինչ ժամկետներում են կատարվելու վճարումները, եթե ապրանքը մատակարարվելու է 1 անգամ ամբողջ խմբաքանակով: Հարգանքով՝ Տնօրեն՝ Էդուարդ Ագիկյան

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0
Было принято решение: за-3, против-0

3. Պարզաբանման պատասխան
3.Уточняющий ответ

Հարց 1

Ի պատասխան Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ Վանաձոր քաղաքի հասարակական տրանսպորտի նոր շարժակազմի տեխնիկական բնութագրերը սահմանվել են՝ հաշվի առնելով քաղաքի լեռնային բարդ ռելիեֆը, փողոցների թեքությունները, նեղության աստիճանը և շրջադարձային հատվածների երկրաչափական առանձնահատկությունները:

Նշված տեխնիկական տվյալների որևէ փոփոխություն (չափերի մեծացում/փոքրացում) կհանգեցնի տրանսպորտային միջոցների մանևրելու հնարավորության սահմանափակմանը, երթևեկության անվտանգության անկմանը և բարձրադիր թաղամասերի սպասարկման խափանմանը: Ուստի, շարժակազմի տեխնիկական պարամետրերի անփոփոխ թողնելը պարտադրված է Վանաձորի ճանապարհատրանսպորտային ցանցի յուրահատկություններով և ուղևորների անվտանգության ապահովման հրամայականով:

Վանաձորը հանդիսանում է լեռնային ռելիեֆ ունեցող քաղաք, որտեղ բազմաթիվ թաղամասեր գտնվում են բարձրադիր գոտիներում:

Վանաձորի փողոցային ցանցի զգալի մասն ունի սահմանափակ լայնություն, իսկ պատմականորեն ձևավորված որոշ թաղամասերում փողոցները նեղ են ու չունեն բավարար շրջադարձային շառավիղներ (ռադիուսներ):

Ավտոբուսների ներկայիս չափսերը օպտիմալ են քաղաքի նեղ փողոցներով մանևրելու, խաչմերուկներում անվտանգ շրջադարձեր կատարելու և կայանված մեքենաների առկայության պայմաններում խցանումներ չստեղծելու համար:

Ավելի մեծ գաբարիտներով ավտոբուսների ներկրումը կկաթվածահարի երթևեկությունը նեղ հատվածներում, իսկ ավելի փոքրերինը՝ չի բավարարի ուղևորահոսքի պահանջարկը պիկ ժամերին:

Տեխնիկական տվյալների փոփոխությունը կպահանջի նաև քաղաքի ողջ կանգառային ենթակառուցվածքի թանկարժեք և ժամանակատար վերակառուցում:

Միաժամանակ հայտնում ենք, որ ավտոբուսների տեխնիկական բնութագրում մեխանիկական փոխանցման տուփի ընտրությունը (կամ ավտոմատ տուփի բացառումը) նույնպես պայմանավորված է քաղաքի ռելիեֆով:

Վանաձորի երկարատև վերելքների և վայրէջքների պայմաններում ստանդարտ ավտոմատ տրանսմիսիաների կիրառումը ոչ նպատակահարմար է, քանի որ այն հանգեցնում է համակարգի հաճախակի գերտաքացման, ձմեռային սեզոնին տեղից շարժվելու բարդությունների և, որ ամենակարևորն է, զառիթափերին շարժիչով արգելակման էֆեկտիվության կորստի: Մեխանիկական կառավարումը վարորդին տալիս է լիարժեք հնարավորություն՝ անվտանգության բարձր մակարդակ ապահովելու բարդ ճանապարհային պայմաններում և նվազեցնում է տրանսպորտային միջոցների սպասարկման ծախսերը:

Հարց 2

Համաձայն DAP (Incoterms 2020) պայմանի՝ ապրանքների ներմուծման մաքսային ձևակերպումների, ինչպես նաև ներմուծման փուլում հաշվարկվող հարկերի (այդ թվում՝ ԱԱՀ-ի) և տուրքերի վճարման պարտավորությունը ամբողջությամբ կրում է Գնորդը:

Քանի որ ապրանքների մաքսազերծումն իրականացվելու է Գնորդի կողմից, մատակարարման պահին ապրանքի արժեքի մեջ տեղական ԱԱՀ-ի ներառումը կհանգեցնի հարկման բազայի կրկնակի հաշվարկի (ինչպես մատակարարի/վաճառողի հաշվարկային փաստաթղթով, այնպես էլ մաքսային հայտարարագրով):

Ելնելով վերոգրյալից՝ կողմերի համար էլեկտրոնային հարկային համակարգով (e-Invoicing) փաստաթղթավորման օպտիմալ և օրենսդրորեն հիմնավորված տարբերակն է.

1. Փաստաթղթի տեսակը. ՊԵԿ համակարգով դուրս է գրվում ոչ թե հարկային հաշիվ, այլ ապրանքների մատակարարման հիմք հանդիսացող Հաշիվ վավերագիր (Invoice):

2. Բովանդակությունը. Փաստաթղթում արտացոլվում են ապրանքների ամբողջական նկարագիրը, չափի միավորը, քանակը, միավորի գինը և ընդհանուր գումարը՝ առանց ԱԱՀ-ի:

3. Իրավական կարգավիճակը. Տվյալ հաշիվ վավերագիրը ՀՀ Հարկային օրենսգրքի իմաստով հանդիսանում է ապրանքի մատակարարման ամբողջական և վավերական հաշվարկային փաստաթուղթ: Այն Վաճառողի համար հիմք է հանդիսանում

հասույթի ճանաչման, իսկ Գնորդի համար՝ մաքսատանը գործարքի գնի (Transaction value) հիմնավորման և ապրանքների սկզբնական հաշվառման համար:

***Հաշիվ վավերագրի «Լրացուցիչ տվյալներ» դաշտում կատարվում է հետևյալ նշումը.

«Մատակարարումն իրականացվում է DAP Vanadzor, RA (Incoterms 2020) պայմանով՝ համաձայն [Ամսաթիվ] թ. Հա. [Պայմանագրի համարը] պայմանագրի: Ներմուծման մաքսային ձևակերպումները, ԱԱՀ-ի և մաքսատուրքերի վճարումն իրականացվում են Գնորդի կողմից՝ սեփական միջոցների հաշվին»:

Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է DAP ք. Վանաձոր, ՀՀ (Incoterms 2020) պայմանին համապատասխան ապրանքը հանձնելու և երկկողմանի հանձման-ընդունման արձանագրության ստորագրման հիման վրա՝ բայց ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0
Было принято решение: за-3, против-0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Տ. Մելքոնյան / Т. Мелконян /
Председатель комиссии

հանձնաժողովի անդամներ՝ _____ Խ. Մայիսյան / Х.Маисян /
Члены комиссии

_____ Է. Հակոբյան / Э. Акопян /

Գնումները համակարգող ՝ _____ Ն. Հովակիմյան/ Н. Овакимян /
Координатор по закупкам